Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (16 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (11 դասաժամ), անգլերենի (6 դասաժամ), տեխնոլոգիայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի

- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)՝

- անձը հաստատող փաստաթուղթ

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

- Ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք

- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 15- ին՝ ժամը 15:00-ին**, ՀՀ Տավուշի մարզի «Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում: Տեղեկությունների համար զանգահարել՝ 077 97 05 05: